ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 174

<01> 09 2014թ.

ք. Արտաշատ

ՀԱՍՄԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Քաղաքացիական ծառայության մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասով, 15-րդ հոդվածի 2-րդ մասի ,,դ,, կետով և 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002թվականի հունիսի 13-ի ,, Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին,, թիվ 17-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 75-րդ և 76-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2014թվականի օգոստոսի 28-ի եզրակացությունը և Հասմիկ Գասպարյանի դիմումը՝

1. Հասմիկ Գասպարյանին 2014թվականի սեպտեմբերի 1-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի /ծածկագիր՝ 62-2.1-4/ պաշտոնում:

2. Աշխատավարձը՝ "Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան :

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 175

ք. Արտաշատ

< 02 > 09 2014թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի ԹԻՎ 171 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով՝

Արարատի մարզպետի 2011 թվականի հոկտեմբերի 21-ի <<Հանձնաժողով ստեղծելու մասին>> թիվ 171 կարգադրության հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները

1. Հանձնաժողովի նախագահ տողում <<Աշոտ Վարդանյան>> բառերը փոխարինել <<Իլյիչ Շադյան>> բառերով

2. Լիլիթ Հակոբյան տողում <<առաջատար>> մասնագետ բառը փոխարինել <<գլխավոր>> բառով

3. Մերի Կարապետյան տողը վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ

<<Կարինե Հովհաննիսյան- Կրթության, մշակույթի և սպորտի վարչության, մշակույթի և սպորտի բաժնի պետի պաշտոնակատար>>

4. <<Վիոլետա Ալոյան>> և <<Սվետա Պողոսյան>> տողերը հանել:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 176

<02> 09 2014թ.

ք. Արտաշատ

ԳՈՒՐԳԵՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ
ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգքրի 158-րդ, 159-րդ և 161-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Գուրգեն Եղիազարյանին տրամադրել 2014 թվականի ամենամյա արձակուրդը՝ ս/թ սեպտեմբերի 1-ից հոկտեմբերի 2-ը ներառյալ:

2.Ֆինանսական և սոցիալ- տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ Ն. Սիմոնյանին՝ հատկացնել միանվագ արձակուրդային վճար՝ միջին ամսական աշխատավարձի չափով:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 177

<02> 09 2014թ.

գ. Արտաշատ

<<ԱՅԳԱՎԱՆԻ ԲԱ>> ՓԲԸ-ՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի ներքին աուդիտի 2014 թվականի տարեկան ծրագրով.

1. «Այգավանի ԲԱ» ՓԲԸ-ում սույն թվականի սեպտեմբերի 3-ից մինչև սեպտեմբերի 9-ը՝ 5 աշխատանքային օր, իրականացնել ներքին աուդիտ:
2. Ներքին աուդիտի իրականացման շրջանակում ընդգրկել «Այգավանի ԲԱ» ՓԲԸ-ի կողմից 2011, 2012 և 2013 թվականների ընթացքում իրականացրած ֆինանսական գործառույթները, գնումների գործընթացները, նախահաշիվներով հաստատված և կատարված փաստացի ծախսերի համեմատումը, աշխատավարձերի հաշվարկման կարգը, հաշվետվությունների արժանահավատությունը և համապատասխանությունը օրենքներին և այլ իրավական ակտերին:
3. Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ Նելլի Սիմոնյանին՝ կատարել գործուղման ծախսերի վճարում:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 178

<<02>> << 09>> 2014թ. գ. Արտաշատ

ՎԱՐՍԻԿ ԱՐԱՐԱՏԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի ա. ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված << Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության>> կարգի 34-րդ կետով, հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հնաբերդի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի 2014 թվականի օգոստոսի 26-ի որոշումը.

2014 թվականի սեպտեմբերի 3-ից Վարսիկ Արարատի Եղիազարյանին նշանակել <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հնաբերդի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն և կնքել աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 179

<02> 09 2014թ.

ք. Արտաշատ

ՀԱՍՄԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ – 728 հրամանագրի 1.6 կետով՝

2014 թվականի սեպտեմբերի 2-ից Հասմիկ Գասպարյանին ազատել << Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Շահումյանի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 180

ք. Արտաշատ

«02» 09 2014թ.

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի N 14 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Իրավական ակտերի մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով՝

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2014թ. հունվարի 24-ի ,,Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի 2014թ. հաստիքացուցակը , պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին,, N 14 կարգադրության հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. հավելվածի Մասիսի ՍԾՏԳ բաժնի 7-րդ կետի 3-դ սյունակի ,,առաջատար,, բառը փոխարինել ,,գլխավոր,, բառով , իսկ 4-րդ սյունակի ,,62-4.1-17,, ծածկագիրը փոխարինել ,,62-3.2-38,, ծածկագրով :

2. հավելվածի Մասիսի ՍԾՏԳ բաժնի 10-րդ կետի 3-դ սյունակի ,,առաջին կարգի,, բառերը փոխարինել ,,գլխավոր,, բառով , իսկ 4-րդ սյունակի ,,62-4.3-8,, ծածկագիրը փոխարինել ,,62-3.2-39,, ծածկագրով :

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 181

<02> 09 2014թ.

ք. Արտաշատ

ԳԱՐԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՄԱՐԶՊԵՏԻ
ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

1. Գարիկ Վարդանյանին 2014 թվականի սեպտեմբերի 2-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի խորհրդական :

2. Աշխատավարձը՝ ըստ դրույքաչափի:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ